

ՀՏԴ 809.198.1

Հայոց լեզու

**ՇԱՐԱԴԱՍՈՒԹՅԱՆ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՎ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ-ԻՄԱՍՍԱՅԻՆ
ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ**

Շ. Մ. Մինասյան

Շարադասությունը հատուկ է աշխարհի գրեթե բոլոր լեզուներին, և յուրաքանչյուր լեզու բառակապակցություն, նախադասություն և խոսք կազմելու համար ունի լեզվական միավորների դասավորության իրեն հատուկ օրենքներն ու կանոնները:

Շարադասություն հասկացությունը մասնագիտական գրականության մեջ գործածվում է լայն ու նեղ իմաստներով:

Լայն իմաստով շարադասությունը բառակազմական միավորների, բառերի, նախադասության անդամների, բառակապակցության անդամների, բարդ նախադասության բաղադրիչ նախադասությունների շարակարգային գծային որոշակի հաջորդականությունն է, որը հնարավորություն է տալիս ձևավորելու խոսքը, նրա միավորների դիրքն ու հարաբերակցությունները [7, 491]:

Նեղ իմաստով շարադասությունը յուրաքանչյուր լեզվի ներքին օրինաչափություններից բխող բառական միավորների դասավորության ընդունված կարգն է նախադասություններում և բառակապակցություններում [6,13]:

Շարադասության կարևոր դերը նկատել են դեռևս անտիկ աշխարհում՝ այն համարելով բան (նախադասություն) կազմելու արվեստ:

Նախապես շարադասությունը դիտվել է որպես նախադասության մեջ բառերի դասավորության կարգ: Սակայն 20-րդ դարի 30-ական թվականներին, երբ սահմանազատվեցին *խոսքի մաս* և *նախադասության անդամ* հասկացությունները, շարադասության հիմքում դրվեցին ոչ թե բառերը, այլ նախադասության անդամները: Այս հանգամանքը պատճառ դարձավ շարադասության սխալ ընկալման, և այդ կարծիքը շարունակվեց մինչև 60-70-ական թվականները: Բանն այն է, որ նախադասության կազմի մեջ մտնում են ոչ միայն լիմաստ բառեր, որոնք դառնում են նախադասության անդամ, այլև նախադասության անդամ չհանդիսացող բառեր, որոնց գրաված դիրքը պակաս կարևոր չէ նախադասության քերականական կառուցվածքի և խոսքի համար:

Շարադասությունը որոշ լեզուներում ունի քերականական ակտիվ, մյուսներում՝ համեմատաբար պասիվ դեր: Ըստ այդմ էլ շարադասությունը լինում է կայուն և ազատ:

Կայուն շարադասությունը հատուկ է անջատական տիպի լեզուներին, որոնցում նա հանդես է գալիս որպես քերականական արտահայտության միջոց:

Ազատ շարադասությունը հատուկ է կցական և թեքական լեզուներին, որոնցում նա կատարում է 3 գործառնություն՝ քերականական, քերականական-իմաստային և ռճային:

Հայերենին՝ որպես կցական լեզվի, բնորոշ է ազատ շարադասությունը: Իհարկե, ազատ շարադասությունն ասելով չպետք է հասկանալ լեզվական միավորների շարադասական ցանկացած փոփոխություն: Ազատ շարադասությունը հնարավորություն է տալիս միևնույն նախադասությունը արտահայտելու մի քանի տարբերակներով՝ նրան հաղորդելով մտքի տարբեր նրբերանգներ:

Այստեղ մենք նպատակ ունենք քննելու շարադասության քերականական և քերականական-իմաստային գործառնությունները պարզ և բարդ նախադասությունների կառուցվածքներում:

Նախ անդրադառնանք շարադասության քերականական և քերականական-իմաստային գործառնություններին պարզ նախադասության կառուցվածքում:

Պարզ նախադասության մեջ շարադասությունը կարող է փոխել բառերի շարահյուսական պաշտոնները, ընդ որում այս դեպքում բառը կարող է պահպանել իր խոսքիմասային իմաստը կամ փոխել այն: Հայերենում կան կառույցներ, որոնցում ենթական և ուղիղ խնդիրը, ունենալով նույն արտահայտությունը (ուղղական հոլով), պայմանավորվում են իրենց գրաված տեղերով. փոխվում են տեղերը, փոխվում են նաև պաշտոնները: Այսպես՝ *կենդանությունը որոշում է զիտակցությունը* և

Մի կին տնսավ մի մարդ նախադասություններում ստորոգյալից առաջ դրված է ենթական, ստորոգյալից հետո՝ ուղիղ խնդիրը: Ընդգծված բառերի շարադասության փոփոխությունը կառաջացնի նրանց պաշտոնների փոփոխություն: Դրա հետ միասին տեղի է ունենում նաև նախադասության մտքի փոփոխություն: Սակայն այս տիպի ոչ բոլոր նախադասություններն է հնարավոր շրջել: Դա հնարավոր է միայն այն դեպքում, երբ ենթակայի և ուղիղ խնդրի միջև հարաբերության փոխադարձությունը իրական է: Այսպես՝ **Արևը տաքացնում է երկիրը և Տղան ծնծում է դուռը** նախադասություններում նման շրջումը անհնարին է:

Ժամանակակից հայերենում երբեմն հանդիպում ենք ենթակա-ստորոգյալ-ուղիղ խնդիր կառուցվածք ունեցող նախադասությունների, որոնց ենթակայի և ուղիղ խնդրի տեղափոխությունը առաջացնում է նախադասության անդամների պաշտոնների փոփոխություն. նախադասության միտքը մնում է անփոփոխ, ինչպես՝ **Սունդուկյանի անվան թատրոնը բացում է նոր թատերաշրջանը և Նոր թատերաշրջանը բացում է Սունդուկյանի անվան թատրոնը** [4, 96-97]:

Առանց մտքի փոփոխության կարող են փոխվել նաև ենթակայի և ստորոգելիի (վերադրի) պաշտոնները. նման փոփոխությունը պայմանավորված է օժանդակ բայի շարադասությամբ: Օրինակ՝ **Սա նա է և Սա է նա**:

Մտքի փոփոխություն չի առաջանում նաև *ինքը* դերանվան հավելումով ձևավորված բաղադրյալ ենթակա ունեցող նախադասություններում, որոնցում նշված դերանվան նախադաս գործածությունը առաջացնում է բացահայտիչ-բացահայտյալ (ենթակա) կապակցություն: Օրինակ՝ **Թագավորը ինքը անձամբ կարգադրեց և Ինքը՝ թագավորը, անձամբ կարգադրեց**:

Պետք է նշել, որ այս տիպի նախադասությունները ունեն ոչ միայն քերականական կառուցվածքի, այլև հնչերանգի տարբերություն: Նույնպիսի տարբերություն առկա է նաև այն նախադասություններում, որոնցում բացահայտչի շարադասական փոփոխությունը նրան վերածում է ստորոգելիի: Օրինակ՝ **Նա՝ որպես ուսուցիչ, աշխատել է երկար տարիներ և Նա աշխատել է որպես ուսուցիչ երկար տարիներ**:

Շարադասության փոփոխությունը առաջացնում է նաև նախադասության երկրորդական անդամների պաշտոնների փոփոխություն. այս դեպքում ևս միտքը մնում է անփոփոխ: Շարադասության քերականական դերով են պայմանավորված բացահայտչի և բացահայտյալի պաշտոնները: Բացահայտիչը միշտ դրվում է բացահայտյալից հետո, և դրանց տեղափոխությունը առաջացնում է պաշտոնների փոփոխություն: Օրինակ՝ **Առաջադրանքը կատարեց միայն Արամը՝ դասարանի ավագը և Առաջադրանքը կատարեց միայն դասարանի ավագը՝ Արամը**:

Հասկանալի է, որ խոսքը վերաբերում է բուն բացահայտչին, մասամբ մասնավորեցնող պարագայական բացահայտչին, իսկ մասնական բացահայտչի շարադասության փոփոխությունը նախադասության անդամների պաշտոնների փոփոխություն չի առաջացնում:

Շարահյուսության քերականական դերով են պայմանավորված նաև ուղղական հոլովով գոյական որոշիչ և որոշյալի պաշտոնները, օրինակ՝ քաղաք Երևան և Երևան քաղաք:

Նախադասության մեկից ավելի անդամներ կարող են ունենալ նույն որոշիչը, հետևաբար որոշիչի շարադասության փոփոխությունը առաջացնում է նախադասության քերականական կառուցվածքի և մտքի փոփոխություն: Օրինակ՝ **Երկնքի պարզ կապույտի մեջ ամպեր էին լողում և Պարզ երկնքի կապույտի մեջ ամպեր էին լողում**:

Եթե նախադասության մեջ նույն լրացյալն ունի և՛ որոշիչ, և՛ հատկացուցիչ, ապա քերականական անհրաժեշտ պահանջով հատկացուցիչը պետք է շարադասվի որոշիչից առաջ: Օրինակ՝ **Ուսանողի առաջին պատասխանը չգոհացրեց դասախոսին** նախադասությունն ունի ճիշտ շարադասություն, եթե *ուսանողի* և *առաջին* բառերի լրացյալը նույնն է [6,14]:

Մի շարք բառեր, բառաձևեր և կապակցություններ նախադասության մեջ կարող են կատարել մեկից ավելի պաշտոններ, և միայն շարադասությունն է որոշում լեզվական տվյալ միավորի պաշտոնը նախադասության մեջ, ընդ որում փոխվում է նաև նախադասության միտքը: Լեզվական այդ միավորներն են.

ա) ձևի մակբայը, օրինակ՝ **Հանկարծակի հարձակումը սկսվեց** (որոշիչ) և **Հարձակումը հանկարծակի սկսվեց** (պարագա):

բ) գոյականի անորոշ տրական հոլովաձևը, օրինակ՝ **Նա հացի խաֆութ գնաց** (որոշիչ) և **Նա խաֆութ գնաց հացի** (պարագա):

գ) գոյականի ներգոյական հոլովաձևը, օրինակ՝ **Լոնդոնում մեր պատվիրակությունը կատարում է իր առաքելությունը** (որոշիչ) և **Մեր պատվիրակությունը իր առաքելությունը կատարում է Լոնդոնում** (պարագա):

դ) Անորոշ դերբայի անորոշ տրական հոլովածն, օրինակ՝ **Գտավ խմելու ջուր** (որոշիչ) և **Գտավ ջուր՝ խմելու** (պարագա)

ե) հարակատար դերբայը, ինչպես նաև հարակատար դերբայ գերադաս անդամ ունեցող դերբայական դարձվածը, օրինակ՝ **Հոգնած ուղևորը նստեց քարին** (որոշիչ) և **Ուղևորը հոգնած նստեց քարին** (պարագա), **Թևերը լայն բացած արագիլը թռավ ճահճուտների վրայով** (որոշիչ) և **Արագիլը, թևերը լայն բացած, թռավ ճահճուտների վրայով** (պարագա):

Ինչպես նշել ենք, շարահյուսությունը կարող է պատճառ դառնալ նախադասության անդամ բառերի ոչ միայն պաշտոնների, այլև նրանց խոսքիմասային իմաստի փոփոխության:

Իմաստափոխությամբ և շարահյուսական գործառնությամբ պայմանավորված խոսքիմասային տարաբերություն ձևեր բերած մի շարք բառեր նախադասության մեջ կարող են կատարել շարահյուսական տարբեր պաշտոններ՝ պայմանավորված շարահյուսության փոփոխությամբ: Այդ բառերից մենք ներկայացնում ենք հետևյալները.

ա) բավական մեծ թիվ կազմող ածական-մակբայներ, որոնք հավասարապես կարող են հանդես գալ որոշիչ (եթե դրված են գոյականից առաջ) և ձևի պարագայի (եթե դրված են բայից առաջ) պաշտոններով: Այդ բառերից են՝ *լավ, վատ, շատ, քիչ, ճիշտ, սխալ, լուռ, հանդարտ, ուրախ, տխուր, հեշտ, արդար, ազնիվ* և այլն: Օրինակներ՝ **Սխալ նախադասությունը գրեց** և **Նախադասությունը սխալ գրեց**, **Հեշտ վարժությունը կատարեց** և **Վարժությունը հեշտ կատարեց**:

բ) Մի շարք անիսկական կապեր և կապական բառեր, որոնք առաջացել են նյութական իմաստ ունեցող խոսքի մասերից, ինչպես՝ *առաջ, հետո, չնայած, շարունակ, հեռու* և այլն: Օրինակներ՝ **Առաջ աշխատանքից հոգնածություն չէր զգում** և **Աշխատանքից առաջ հոգնածություն չէր զգում**, **Հետո դասերից կատարման** և **Դասերից հետո կատարման**: Առաջին նախադասություններում ընդգծված բառերը ժամանակի մակբայներ են և կատարել են ժամանակի պարագայի պաշտոն, երկրորդ նախադասություններում ընդգծված բառերը կապեր են և մասնակցել են ժամանակի պարագաների ձևավորմանը: Այլ օրինակներ՝ **Կուտակված գրավորներին չնայած՝ զնաց քննիչ** (դերբայ) և **Չնայած կուտակված գրավորներին՝ զնաց քննիչ** (կապ): **Ծարունակ բամբասող կանանց ասեկոսությունները տևել են տարիներ** (մակբայ) և **Բամբասող կանանց ասեկոսությունները տևել են տարիներ շարունակ** (կապ):

գ) Նոր բառը, որը լինելով ածական, ձևեր է բերել նաև ժամանակի մակբայի խոսքիմասային իմաստ: Օրինակ՝ **Ումանք կարդում են նոր գրքերը** և **Ումանք նոր են կարդում գրքերը**:

դ) Էլ բառը, որը, ինչպես հայտնի է, ունի խոսքիմասային 4 տարբեր իմաստներ՝ շաղկապ (*նաև* իմաստով), մակբայ (*այլևս* իմաստով), դերանուն (*ուրիշ* իմաստով) և վերաբերական (*անգամ* իմաստով): Օրինակներ՝ **Մեր տները՝ Աստված էլ չհանդուրժեց նրա մեծությունը** (շաղկապ, կարող է նաև որպես վերաբերական ընկալվել) և **Էլ մեր տները՝ Աստված, չհանդուրժեց նրա մեծությունը** (մակբայ), **Էլ բան չգիտե՞ս** (դերանուն) և **Բան էլ չգիտե՞ս** (վերաբերական):

ե) Նույնպես բառը ցուցական դերանուն է (այդ իմաստով նա քիչ է գործածվում) և հավելական շաղկապ: Օրինակ՝ **Ես նույնպես կգրեմ** (շաղկապ) և **Ես կգրեմ նույնպես** (դերանուն):

զ) Ուղիղ և ճիշտ բառերը, լինելով ածական և ձևի մակբայ, իմաստափոխությամբ ձևեր են բերել նաև վերաբերականի արժեք (*հենց* սաստկականի իմաստով): Օրինակներ՝ **Ուղիղ կանգնեց դռան դիմաց** (մակբայ) և **Կանգնեց ուղիղ դռան դիմաց** (վերաբերական), **Ծարվեցին ուղիղ գծի նրկայնքով** (ածական) և **Ուղիղ շարվեցին գծի նրկայնքով** (մակբայ), **Ճիշտ խփեց նշանակետին** (մակբայ) և **Խփեց ճիշտ նշանակետին** (ածական, կարող է նաև որպես վերաբերական ընկալվել):

է) զգալի թիվ կազմող շաղկապներ, որոնք երկփեղկվելով ձևեր են բերել նաև վերաբերականի արժեք, ինչպես՝ *սակայն, այդուհանդերձ, այնուհանդերձ, այնուամենայնիվ, մանավանդ, կարծես, ասես, միայն, իսկ* և այլն: Օրինակներ՝ **Սակայն ինձ դու ճիշտ չես հասկացել** (շաղկապ) և **Դու, սակայն, ինձ ճիշտ չես հասկացել** (վերաբերական), **Այդուհանդերձ, դու ճիշտ չես վարվել** (շաղկապ) և **Դու, այդուհանդերձ, ճիշտ չես վարվել** (վերաբերական), **Միայն պետք է կարողանամ գտնել ինձ անհրաժեշտ գրքերը** (շաղկապ) և **Պետք է կարողանամ գտնել միայն ինձ անհրաժեշտ գրքերը** (վերաբերական), **Իսկ այդ պատճառով նրան վնդեցին** (շաղկապ) և **Այդ իսկ պատճառով նրան վնդեցին** (վերաբերական):

ը) Ողջ բառը, որը համատեղում է մակբայի (նաև ածականի) և դերանվան խոսքիմասային իմաստները: Օրինակ՝ **Ողջ ջոկատը տեսավ նրան** (դերանուն) և **Ջոկատը ողջ տեսավ նրան** (մակբայ):

թ) հարակատար դերբայը, որը խոսքիմասային փոխանցմամբ կարող է հանդես գալ գոյականի և ածականի արժեքներով: *Կարդացած* բառակը իմաստափոխությամբ ձևեր է բերել

խնոր իմաստը և դարձել ածական: Օրինակ՝ **Այդ մարդը սիրում է բաժանել իր կարդացած գրքերը** (դերբայ) և **Այդ կարդացած մարդը սիրում է բաժանել իր գրքերը** (ածական):

ժ) *խմիչիայոց, անտարակոյս, անկասակած* և նման բառեր, որոնք շարահյուսական գործառնությունով ձևի մակբայից անցում են կատարել վերաբերականի: Օրինակ՝ **Նա այդ մասին խոսեց խմիչիայոց** (մակբայ) և **Խմիչիայոց, նա այդ մասին խոսեց** (վերաբերական):

ժա) քանակական թվականի կրկնությամբ կազմված բարդությունները, որոնք ունեն և՛ բաշխական թվականի, և՛ չափի մակբայի իմաստ: Օրինակ՝ **Աշակերտներին նրկու-նրկու տնտր բաժանեց** (թվական) և **Աշակերտներին տնտր նրկու-նրկու բաժանեց** (մակբայ):

ժբ) *բերնեբերան* բառը, որը ենթարկվել է ներխոսքիմասային փոխանցման և որպես մակբայ՝ արտահայտում է ձևի և չափի հարաբերություններ: Օրինակ՝ **Բերնեբերան տարածված լուրը լցրեց նրա համբերության բաժակը** (ձևի) և **Տարածված լուրը բերնեբերան լցրեց նրա համբերության բաժակը** (չափի):

ժգ) *այլապես* բառը, որը բուն իմաստով մակբայ է, նաև ձևոր է բերել շաղկապի իմաստ: Այժմ առավել գործածական է որպես շաղկապ: Օրինակ՝ **Անհնար է այլապես արտագրել** (մակբայ) և **Այլապես անհնար է արտագրել** (շաղկապ):

Եթե պարզ նախադասության կազմում կա հարաբերական դերանուն, իսկ ստորոգյալը բաղադրյալ է կամ արտահայտված է բայի բաղադրյալ ժամանակածնով, ապա էական (օժանդակ) բայի շարահյուսության փոփոխությունը պատճառ է դառնում նախադասության հնչերանգային բնույթի փոփոխության: Համեմատենք.

Երբ քեզ հետ են ընկերներդ:

Ե՞րբ են քեզ հետ ընկերներդ:

Ով բեմադրել է այդ պիեսը:

Ո՞վ է բեմադրել այդ պիեսը:

Շարահյուսությունը բարդ նախադասության կազմում կատարում է քերականական հետևյալ գործառնություններ .

1. Միևնույն բառը, հանդես գալով բարդ նախադասության տարբեր բաղադրիչների կազմում, արտահայտում է քերականական տարբեր իմաստներ:

Մանավանդ շաղկապը շարահյուսական գործառնությունով ձևոր է բերել նաև վերաբերականի իմաստ: Օրինակ՝ **Պարապի՛ր հայերեն, մանավանդ քեզ այն միշտ պետք է գալու** (շաղկապ) և **Պարապի՛ր մանավանդ հայերեն, քեզ այն միշտ պետք է գալու** (վերաբերական):

Թե՛ չէ շաղկապը, ինչպես հայտնի է, արտահայտում է և՛ համադասական, և՛ ստորադասական հարաբերություն: Որպես համադասական՝ այն հիմնականում դրվում է նախադասության սկզբում, որպես ստորադասական՝ բացառության կարգով դրվում է նախադասության վերջում: Օրինակ՝ **Կկանչես, թե՛ չէ ներս կմտնեն** (համադասական) և **Կկանչես թե՛ չէ, ներս կմտնեն** (ստորադասական):

Այլ և այնինչ բառերը և՛ անորոշ դերանուններ են, և՛ համադասական շաղկապներ: Օրինակներ՝ **Չպատասխանեց. վերցրեց մի այլ նամակ և սկսեց կարդալ** (դերանուն) և **Չպատասխանեց, այլ վերցրեց մի նամակ և սկսեց կարդալ** (շաղկապ), **Ծրարը հանձնեց այնինչ խանութի գործակատարին, հետո պարզվեց՝ հանձնարարությունը ճիշտ չի կատարել** (դերանուն) և **Ծրարը հանձնեց խանութի գործակատարին, այնինչ հետո պարզվեց՝ հանձնարարությունը ճիշտ չի կատարել** (շաղկապ):

Իմաստափոխությամբ խոսքիմասային փոխանցման է ենթարկվել *մեկ* թվականը՝ ձևոր բերելով նաև կապի արժեք: Օրինակ՝ **Բացեց մեկ օժանելիքի տուփը, և հոտը տարածվեց ամբողջ սենյակով** (թվական) և **Բացեց օժանելիքի տուփը, և հոտը տարածվեց ամբողջ սենյակով մեկ** (կապ):

Մինչև բառը ժամանակի իմաստով շաղկապ է, որպես կապ՝ արտահայտում է չափի, ժամանակի և ձևի իմաստներ: Օրինակներ՝ **Մինչև գնաս ու գաս, կհաշվեմ մեկից քսանը** (շաղկապ) և **Գնաս ու գաս, կհաշվեմ մեկից մինչև քսանը** (կապ):

Ապա բառը ժամանակի մակբայ է, ինչպես նաև կամային վերաբերական: Օրինակ՝ **Ապա վերցրու՛ և կարդա՛** (վերաբերական, հնչերանգով պայմանավորված՝ նաև մակբայ) և **Վերցրու՛ և ապա կարդա՛** (մակբայ):

Շարահյուսական փոփոխությունը ներխոսքիմասային փոխանցման պատճառ է դառնում ոչ միայն պարզ, այլև բարդ նախադասության կառուցվածքում:

Մեկ-մեկ բառը ընդհանրական մակբայ է և արտահայտում է ժամանակի, ձևի և չափի հարաբերություններ: Օրինակ՝ **Մեկ-մեկ հիշում է, թե ինչպես բաժանեց գրքերը** (ժամանակ) և **Հիշում է, թե ինչպես գրքերը մեկ-մեկ բաժանեց** (չափ):

Դիմավոր որոշ բայաձևեր, ինչպես նաև դիմավոր բայով ձևավորված որոշ կառույցներ խոսքիմասային փոխանցմամբ հանդես են գալիս նաև վերաբերականի արժեքով, դրանցից են՝ *թվում է, նրկում է, ասում են, արի, տես* և այլն: Այսպիսի փոխանցման հետևանքով շարադասական փոփոխությունը պատճառ է դառնում բարդից պարզ նախադասության անցման: Օրինակներ՝ *Թվում է՝ ամեն ինչ լավ կլինի* (բարդ) և *Ամեն ինչ, թվում է, լավ կլինի* (պարզ), *Նրկում է՝ դու լավ ես պատրաստվել* (բարդ) և *Դու, նրկում է, լավ ես պատրաստվել* (պարզ): *Տես ու արի* կառույցում մենք ունենք բարդ համադասական նախադասություն՝ միավորական հարաբերությամբ, մինչդեռ *Արի ու տես* կառույցը ընդամենը վերաբերական է, ընդ որում կառույցների միջև, ինչպես տեսնում ենք, կա նաև հնչերանգային տարբերություն: *Թե՛ ինչ է* կառույցից շարադասական փոփոխությամբ ստացվել է *ինչ է թե՛* շաղկապը, որը առավել տարածված է ժողովրդախոսակցական լեզվում: Օրինակ՝ *Հարցրեց, թե՛ ինչ է բնագոյ հասկացությունը. հետաքրքիր էր և Հարցրեց, ինչ է թե՛ բնագոյ հասկացությունը. հետաքրքիր էր:*

Ինչ գնով էլ լինի նախադասությունը ունի նաև հաստատական (որոշ տեղերում՝ զիջական) վերաբերականի արժեք: Օրինակ՝ *Ինչ գնով էլ լինի հողամասը, պետք է ձեռք բերենք* և *Հողամասը, ինչ գնով էլ լինի, պետք է ձեռք բերենք:*

Ահա բառը ժամանակի մակբայ է, նաև ցուցական վերաբերական: Որպես ցուցական վերաբերական՝ նա կարող է նախադասության մեջ ստորոգյալի դեր կատարել [3,145]: Այս հանգամանքը հաշվի առնելով՝ *ահա* բառը վերապահորեն քննվում է այս ենթակետի տակ: Օրինակ՝ *Ահա մեր տունը, կանգնած է թրի գագաթին* և *Մեր տունը ահա կանգնած է թրի գագաթին:*

3.Քերականական ճիշտ կառույց ստանալու նպատակով որոշիչ (և ոչ միայն) ներկորդական նախադասությունը դրվում է այն բառից հետո, որի լրացումն է: Երբեմն հանդիպում ենք այնպիսի կառույցների, որոնցում որոշիչ ներկորդական նախադասությունը կարող է լինել տարբեր անդամների լրացում՝ կախված ներկորդական նախադասության շարադասության փոփոխությունից: Օրինակ՝ *Այդ բարի ժախտի մեջ ես հավատ տեսա նրա՝ դեպի ինձ ցույց տված սառնությունը, որ սկզբում ինձ տարօրինակ էր թվում և Նրա՝ դեպի ինձ ցույց տված սառնությունը ես հավատ տեսա այդ ժախտի մեջ, որ սկզբում ինձ տարօրինակ էր թվում:*

Նույն ձևով նպատակի պարագա ներկորդական նախադասությունը կարող է լրացնել ստորոգյալին կամ շարադասության փոփոխությամբ՝ նրա լրացմանը: Օրինակ՝ *Նա զգույշ ու դանդաղ քայլերով դուրս եկավ, որ բամբակենիները չտրորի և Նա զգույշ ու դանդաղ քայլերով, որ բամբակենիները չտրորի, դուրս եկավ:*

4.Բարդ նախադասության բաղադրիչ նախադասությունների շարադասության փոփոխությունը հանգեցնում է նախադասության բնույթի փոփոխության՝ համադասական կառույցները փոխակերպելով ստորադասականի կամ հակառակը [6,19]: Օրինակներ՝ *Տեղն արդեն գրավված է, չես հասցնում հայացքդ շրջել* (համադասական) և *Չես հասցնում հայացքդ շրջել. տեղն արդեն գրավված է* (ստորադասական), *Գործը կհաջողվի՝ անցնեք ինձ մոտ* (ստորադասական) և *Անցնեք ինձ մոտ, գործը կհաջողվի* (համադասական): *Ուսուցիչը նորից բացատրեց դասը, Արամը նրկու անգամ դիմեց ուսուցչի օգնությանը* (համադասական) և *Արամը նրկու անգամ դիմեց ուսուցչի օգնությանը. ուսուցիչը նորից բացատրեց դասը* (ստորադասական):

Շատ հետաքրքիր է *մինչդեռ* շաղկապով կապակցված բարդ նախադասության բաղադրիչների հարաբերության փոփոխությունը շարադասական փոփոխության դեպքում [4,100]: Ինչպես հայտնի է, այս շաղկապը արտահայտում է և՛ համադասական (ներհակական), և՛ ստորադասական (ժամանակի) հարաբերություններ: Բաղադրիչ նախադասությունների շարադասության փոփոխությունը փոխում է նրանց հարաբերությունը՝ համադասական հարաբերությունը վերածելով ստորադասականի կամ հակառակը: Հետաքրքիրն այն է, որ այս դեպքում ներույթը չի սահմանափակվում մեկ կամ մի քանի օրինակներով, այլ տարածվում է բոլորի վրա, այսինքն *մինչդեռ* շաղկապով կապակցված այն բոլոր բարդ նախադասություններում, որոնցում հնարավոր է բաղադրիչ նախադասությունների շարադասության փոփոխություն, առաջանում է նախադասության բնույթի փոփոխություն: Օրինակներ՝ *Դու քնած էիր, մինչդեռ ես աշխատում էի* (համադասական) և *Մինչդեռ ես աշխատում էի, դու քնած էիր* (ստորադասական), *Հայը կառուցում է, մինչդեռ թուրքը ավեր ու արյուն է սփռում* (համադասական) և *Մինչդեռ թուրքը ավեր ու արյուն է սփռում, հայը կառուցում է* (ստորադասական):

Որպես համադասական շաղկապ՝ *մինչդեռ*-ը արտահայտում է ոչ միայն հանդիպադրական հարաբերություն (համարժեք *իսկ* շաղկապին, ինչպես բերված օրինակներում է), այլև կարող է արտահայտել հակասման հարաբերություն (համարժեք *բայց*-ին): Այս պարագայում բաղադրիչ

նախադասությունների շարադասության փոփոխություն հնարավոր չէ: Օրինակ՝ **Ուսուցիչը ոգևորված բացատրում էր, մինչդեռ աշակերտները չէին լսում նրան:**

5.Բարդ ստորադասական նախադասության կառույցում երկրորդական նախադասության շարադասության փոփոխությունը կարող է հանգեցնել նրա բնույթի փոփոխության [6,19]: Նկատել ենք հետևյալ անցումները.

ա.պայման-հետևանք, օրինակ՝ **Փորձանքի մեջ ընկար՝ Շնկոն կողքիդ է (պայման) և Շնկոն կողքիդ է. փորձանքի մեջ ընկար** (հետևանք):

բ.պայման-պատճառ, օրինակ՝ **Լավն է՝ թող ինքը վերցնի (պայման) և Թող ինքը վերցնի. լավն է** (պատճառ):

Հանդիպում են նաև այնպիսի կառույցներ, որոնցում տեղի է ունենում գլխավոր նախադասությունից երկրորդականի անցում՝ կապված շաղկապի (շաղկապական բառի) շարադասության փոփոխության հետ: Օրինակներ՝ **Մինչ դու գրում էիր, նա աշխատում էի և Մինչ նա աշխատում էի, դու գրում էիր, Ինչքան նա գոռում էր, այնքան նա լռում էի և Ինչքան նա լռում էի, այնքան նա գոռում էր:**

Հիմնականում սրանք են շարադասության՝ որպես շարահյուսական կապակցման միջոցի քերականական և քերականական-իմաստային գործառնությունները:

Գրականություն

1. Աբրահամյան Ս.Գ., Հայոց լեզու. շարահյուսություն, Եր., 2004:
2. Աբրահամյան Ս.Գ., Պառնասյան Ն.Ա., Օհանյան Հ.Ա., Բաղիկյան Խ.Գ., Ժամանակակից հայոց լեզու. շարահյուսություն, հ.3, Եր., 1976:
3. Ավետիսյան Յու., Զաքարյան Հ., Հայոց լեզու. ձևաբանություն, Եր., 2008:
4. Բաղիկյան Խ.Գ., Ժամանակակից հայոց լեզվի շարադասությունը և նրա ուսուցումը, Եր., 1984:
5. Զաքարյան Հ., Ավետիսյան Յու., Հայոց լեզու. շարահյուսություն, Եր., 2009:
6. Պապոյան Ա.Հ., Բաղիկյան Խ.Գ., Ժամանակակից հայոց լեզվի շարահյուսություն, Եր., 2003:
7. Պետրոսյան Հ.Զ., Հայերենագիտական բառարան, Եր., 1987:

Резюме

Армянскому языку как и многим агглютинативным языкам присущ свободный порядок слов и предложений, который имеет грамматическую, грамматико-семантическую и стилистическую функцию. Данная статья рассматривает только первые две функции. Они анализируются в структурах простых и сложных предложений. В простых предложениях порядок слов имеет грамматическую и грамматико-семантическую функцию, а в сложных предложениях порядок предложений - только грамматико-семантическую.